ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014թվականի փետրվարի 10-ի <<Հայաստանի Հանրապետության մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին>> N85-Ա որոշման պահանջների՝ սկսվել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի ձևավորման գործընթացը:

Խորհրդի կազմում ընդգրկվում են մարզի բոլոր քաղաքային, ինչպես նաև 3500 և ավելի բնակիչ ունեցող համայնքների երկուական ներկայացուցիչ, որոնցից մեկը ներկայացնում է պետական, իսկ մյուսը՝ ոչ պետական հատվածը:

Խորհրդի պետական հատվածը ներկայացնող անդամը համայնքի ղեկավարի տեղակալն է, իսկ այդ հաստիքի բացակայության դեպքում՝ համապատասխան համայնքի աշխատակազմի ղեկավարը:

Խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամը պետք լինի 16-30 տարեկան երիտասարդ, որը համապատասխանում է հետևյալ չափանիշներին՝

1) երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրների տիրապետում.
2) երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումների մասնակցության փորձ.
3) երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն:

Եթե ցանկություն ունեք ընդգրկվելու մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում և բավարարում եք վերը նշված չափանիշներին՝ կարող եք դիմել համայնքապետարան:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ